ՅԱԶԸՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1919-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի առաջին հանրապետության քաղաքականությունն իր օտարազգի քաղաքացիների նկատմամբ բավարար չափով չի ուսումնասիրվել: Բացառություն են հանրապետության թուրք և թաթար (ադրբեջանցի) քաղաքացիների հետ առնչված իրադարձություններին նվիրված ուսումնասիրությունները:

1878 թվին, Սան Ստեֆանոյի և այն վերանայած Բեռլինի վեհաժողովի արդյունքով տիրանալով Կարսի մարզին, ցարական Ռուսաստանը որդեգրեց ժողովրդագրական այլ քաղաքականություն: Արգելելով հայերի և մուսուլմանների ներհոսքերը մարզի տարածք, այս իշխանություններն անցան մարզն արագորեն ռուսականացնելու ակտիվ քաղաքականության, որպես նախապատրաստություն այս ուղղությամբ Օսմանյան կայսրության մյուս տարածքներ ու «տաք ջրեր» ռուսական հեռագնա ծրագրերի: Մարզում, մասնավորաբար՝ Ալիքսանդրապոլ-Կարս-Մարիոամիշ երկաթուղու և խճուղու անմիջական մոտակայքում, ռուսական տիրապետության 40 տարիների ընթացքում հայտնվեցին ռուս մոլոկան աղանդավորների շուրջ 40 գյուղեր[1], Նովո-Էստոնկա գյուղում հաստատվեցին վերաբնակիչներ Էստոնիայից: Այսպիսով, մարզի բնակչության ազգային խճանկարը դարձավ է՛լ ավելի խայտաբղետ: Մարզում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ապրում էին բազմահազար հայեր, քրդեր, թաթարներ, թուրքեր, կարափափախներ, ռուսներ, հույներ, փոքր քանակով՝ նաև թուրքմեններ[2], վրացիներ, աջարներ, լազեր, հրեաներ, էստոնացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: Ռուսաստանի 1909թ. մարդահամարի համաձայն, Կարսի մարզում ապրում էր 364,700 հոգի, որոնցից 131 հազարը (35,9%) թուրքախոս ժողովուրդների էին պատկանում. հայերը կազմում էին 91 հազար (25,3%), իսկ ռուսները՝ 35 հազար (9,6%)[3]: Փարիզի խաղաղության կոնֆերանսին ՀՀ պատվիրակության ներկայացրած մի հուշագրում, հիմնվելով Ռուսաստանի 1915 և 1917 թվականների պաշտոնական վիճակագրություն-

ների վրա, հայտնվում է, որ Կարսի նահանգում ապրում են 123,170 հայեր, 158,804 մուսուլմաններ, 4,231 վրացիներ և 118,100 այլ ազգիներ[4]:

1918թ. փետրվարին, թուրքերը շարժվեցին դեպի արևելք: Հայկական փոքրաթիվ ուժերը չկարողացան առաջքն առնել թուրքական հարձակողականին: Ապրիլի 12-ի կեսօրին, Անդրկովկասյան Մեյմի կառավարության նախագահ, վրացի մենշևիկ Չխենկելու հրամանով, հայկական կորպուսը առանց մարտի թողեց Կարսը և նահանջեց: Հետևեց քաղաքի և նահանգի հայ ազգաբնակչության, նաև հույների և առհասարակ բոլոր քրիստոնյաների գաղթը դեպի Արևելյան Հայաստան, Վրաստան և Հյուսիսային Կովկաս: 1919 թվին Փարիզի կոնֆերանսին ՀՀ պատվիրակության ներկայացրած մի փաստաթղթի համաձայն, միայն Կարսի շրջանից գաղթել են «շուրջ 120,000 հայեր»[5]:

1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով, ՀՀ-ը Օսմանյան կայսրությանը զիջեց Կարսի նահանգն ամբողջությամբ: Պայմանագրի հավելվածում, մարզից գաղթածներին իրավունք էր տրվում մեկ ամսվա ընթացքում վերադառնալ իրենց տուն ու տեղին: Հասկանալի է, որ այս «իրավունքը» հայ գաղթականների համար սոսկ հռչակագրային բնույթ ուներ:

Առաջին աշխարհամարտում թուրքերի պարտությունից հետո, Կարսի նահանգում հաստատվեցին բրիտանական իշխանությունները ու զորքերը: Զորահրամանատար Շյուքրի փաշայի անմիջական մասնակցությամբ, նահանգի թուրքերը, քրդերն ու ռուս մոլոկանները կազմեցին «Ազգային խորհուրդ»՝ «Միլլի շուրա», որը «կառավարում էր» ինքնահռչակ «Հարավ-արևմտյան հանրապետությունը»: 1919 թ. սկզբից, ՀՀ կառավարությունը բանակցություններ վարեց բրիտանացիների հետ՝ նահանգը ՀՀ-ին կցելու նպատակով: Բրիտանացիք չեին շտապում. նրանք հայերին չեին վստահում՝ նրանց ռուսասեր կամ ռուսամետ համարելով: Խնդիրը բարդանում էր նրանով, որ Կարսի նահանգի հյուսիսային շրջանների նկատմամբ տարածքային հավակնություններ ուներ Վրաստանը[6]: 1919 թ. հունվարի 8-ին, Արևելյան Անդրկովկասում բրիտանական գեներալ Ֆ. Ուոկկերի և ՀՀ արտգործնախարար Մ. Տիգրանյանի միջև կնքվեց Կարսի նահանգի մասին մի համաձայնություն, որի 10-րդ և 11-րդ կետերը վերաբերում էին ոչ-հայ բնակչության կառավարման ձևին. նշվում էր, որ «մահմեդականները վախենում են հայկական վարչությունից, հետևաբար, անհրաժեշտ է գործել զգուշությամբ և ցրվել ամեն վախ ցույց տալու համար, որ հայերը ընդունակ են մոռանալու ցեղային նախապաշարումները, երբ որ իշխանության գլուխ են կանգնում»[7]: ՀՀ-ի կողմից Կարսի քաղաքացիական նահանգապետ նշանակվեց վարչական հմուտ և փորձառու գործիչ Մտեփան Ղորղանյանը: Հայ-բրիտանական միացյալ զորքերը, առանց զինյալ դիմադրության

հանդիպելու, 1919 թ. ապրիլի 24-ին մտան Կարս: Չորս օր հետո, քաղաքում ամբողջ իշխանությունը փոխանցվեց հայերին: Մայիսի 9-ին հայկական զորքերը մտան ռազմավարական նշանակության Միրդինեկ հունաբնակ գյուղը, իսկ ամսի 13-ին՝ Օլթի և Կաղզվան: «Քրդերն ու թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով»[8]:

Այսպիսով, Կարսի ամբողջ մարզը, բացի Օլթիի գավառի արևմտյան մասից, անցավ ՀՀ գերիշխանության տակ: Սկսվեց հայ գաղթականների զանգվածային տունդարձը: Խանդավառված մոտակա տունդարձի հեռանկարով, Կարսի նահանգ տեղափոխվեց արևմտահայ գաղթականների մի զգալի մասը: 1919 թ. երկրորդ կեսին, ըստ ՀՀ պատվիրակության ներկայացրած մի վիճակագրության, Կարսի նահանգում ապրում էր շուրջ 404 հազար մարդ, որից մոտ 160 հազարը՝ մուսուլմաններ, նրանց թվում՝ 55 հազար մուսուլման քրդեր[9]:

Ազատագրելով Կարսի նահանգը, ՀՀ-ը ժառանգեց նաև նահանգում ազգամիջյան բարդ, հաճախ և թշնամական հարաբերությունները, որոնք հարկավոր էր կարգավորել և լծվել խաղաղ, շինարարական աշխատանքի: Հակառակ այս ուղղությամբ նահանգապետ Մտ. Ղորղանյանի հետևողական ջանքերի, մինչև նահանգի անկումը 1920 թ. հոկտեմբերի վերջին-նոյեմբերի սկզբին, ՀՀ-ին չհաջողվեց լուծել այս ծայր աստիճան դժվար խնդիրը:

Նահանգում հայ-քրդական հարաբերությունների վատացման տեղիք տվին առաջինը քրդերը: Եթե ցարական իշխանությունը կարողանում էր երկաթե բռունցքով խաղաղ հարաբերություններ պահպանել այս երկու ժողովուրդների միջև, ապա՝ 1918 թ. սկզբին, թուրքական հարձակման ժամանակ, քրդական հրոսակախմբերը մեծ աշխուժություն ցուցաբերեցին հայոց և հույների ունեցվածքը թալանելու և նրանց կոտորելու գործում[10]: Քրդերը մեծ թիվ էին կազմում նաև Ջավիդ բեյի 11-րդ դիվիզիայի կազմում, որը 1918 թ. մայիս-հունիսին հայոց ահավոր կոտորածներ իրագործեց Լոռու և Փամբակի շրջաններում[11]: Թարմ էր նաև Մեծ եղեռնի իրագործման մեջ քրդերի ակտիվ մասնակցության հիշատակը: Հասկանալի է, որ հայերը քրդերից դաժան վրեժ էին լուծելու, որն էլ փոխվրեժ էր առաջ բերելու, և այսպես շարունակ: Արդեն 1918թ. առաջին կեսին, նահանջող հայերն ու հարձակվող թուրքերն ու քրդերը դաժանորեն կոտորեցին հակառակորդի խաղաղ բնակիչներին[12]:

Հասկանալի ու արդարանալի է, որ 1919 թ. կեսերից տուն դարձող գաղթականները լցված լինեին վրեժի զգացումներով: Անարդարանալին և ՀՀ-ի համար նույնիսկ ողբերգական հետևանքների առաջնորդողը, սակայն, վրիժառության պիտակի տակ հայ բաշիբոզուկների կատարած բռնություններն ու կամայականություններն էին: Այս մասին կան բազմաթիվ վկայություններ[13]:

Ալ. Խատիսյան, որի վարչապետության օրոք իրականացվեց Կարսի մարզի կցումը Հայաստանի Հանրապետությանը, մարզում ՀՀ իշխանությունների հետապնդած «չորս գլխավոր նպատակներից» երրորդն է հիշատակում «խաղաղեցնել բնակչության մուսուլման տարրը և հաշտեցնել զայն քրիստոնյա զանգվածին հետ»[14]:

ՀՀ-ը ազգային փոքրամասնությունների նկատմամբ չուներ հստակ քաղաքականություն: Կարսի նահանգում, տեղական ոչ-հայ տարրերի նկատմամբ ևս չկար պետական հստակ քաղաքականություն: Հայկական իշխանության հաստատումից մինչև Կարսի անկման օրը, ՀՀ քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև Կարսի նահանգում գոյություն ունեին թշնամության հասնող հակամարտություններ, որոնցում կարևոր տեղ էր զբաղեցնում այլազգի տարրերի նկատմամբ վարվելիք քաղաքականության ուղղվածությունը: Երկու կողմերի բևեռներն էին՝ մի կողմից նահանգապետ Ստեփան Ղորղանյանը, մյուս կողմից՝ Կարսի բերդապետ, գեներալ-լեյտենանտ Դանիել բեգ Փիրումյանը և նահանգի զորամիավորումների անմիջական հրամանատար գեներալ-մայոր Հովսեփյանը: Իսկ Հայ հեղափոխական դաշնակցության տեղական գործիչների մի մասը հակվում էր այս, մյուս մասը՝ այն խմբին: Այս երկվությունը ճակատագրական եղավ ամբողջ նահանգի համար:

Ստեփան Ղորղանյանը հակված էր խաղաղ միջոցներով, ուժի ցուցադրումով, բայց ոչ այն անպայմանորեն գործադրելով սիրաշահել նահանգի մուսուլման բնակչությանը, և, մասնավորաբար, քրդերին[15]: Ղորղանյանին հակառակ, նրա իսկ բնորոշումով, «ջարդել-փշրելու» քաղաքականության կողմնակից էին և դա կիրառում էին նահանգի հայկական զորամիավորումների բարձրաստիճան սպաները:

Կարսի նահանգում հայ-քրդական հարաբերությունները ունեցել են հիմնականում տնտեսական բովանդակություն: Քրդերը բնակվում էին լեռնային շրջաններում ու առավելապես զբաղվում անասնապահությամբ: Նրանց տնտեսական գործընկերները եղել են հիմնականում հայերը: «Կարսեցի բոլոր հայերը կապված էին նահանգի բոլոր նշանավոր քրդերի հետ բազմաթիվ գործնական, տնտեսական, առևտրական կապերով»[16]: Մինչև Առաջին աշխարհամարտը, «հայերի խաշնարած տնտեսությունը գտնվում էր բացառապես քրդերի ձեռքում»[17]: Հայերն իրենց տավարը քրդերին «յուղով կտային», այսինքն՝ աշունը նրանց հանձնած իրենց անասուններին հետ էին վերցնում նորածին ձագերի հետ՝ խնամող քրդերին թողնելով այս ժամանակահատվածում ստացված յուղը (կարագը): Քրդերի մրցակիցներն էին գյուղական շրջաններում ապրող, անասնապահությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող հույները: Այս մրցակցությունը 1918-1920 թվականներին վերածեց թշնամության և փոխադարձ կոտորածների ու թալանի:

1919-1920թթ. Կարսի նահանգում հայ-քրդական հարաբերությունների վրա իրենց կնիքն էին դրել նաև մինչ այդ թվականները նահանգում թուրք-քրդական, ռուս-քրդական և վրացա-քրդական հարաբերությունները: Թե՛ թուրքերը և թե՛ վրացիները միշտ կեղեքել են քրդերին, նրանց համարել երկրորդ կարգի մարդիկ, և շահագործել նրանց, հաճախ դիմելով նույնիսկ բռնությունների: Ռուսները ևս շահագործում էին քրդերին, սակայն միաժամանակ աշխատում էին սիրաշահել նրանց՝ Անատոլիայի խորքերը իրենց հետագա հասուցխաղացման ծրագրերին ծառայեցնելու համար սահմանի երկու կողմերում ապրող քրդերին: Այսուհանդերձ, քրդերը այդքան էլ գոհ չեին ռուսական իշխանություններից:

Հետևաբար, քրդերը հույս ունեին, որ հայկական իշխանությունը վերջ կտա իրենց նկատմամբ նախորդ իշխանությունների արհամարհական կամ թշնամական վերաբերմունքին, սակայն տեղի ունեցավ ճիշտ հակառակը, ինչպես պիտի տեսնենք:

Հայ-քրդական հարաբերությունների բնականոնացմանն էր նպատակամիտված 1919 թ. ամռանը Երևանում ստեղծված հատուկ մարմինը՝ քրդերի պետքերը հոգալու համար. նախատեսվում էր հանրապետության քրդաշատ վայրերում, հատուկ քրդերի համար բացել դպրոցներ, հիվանդանոց, դեղատուն, սպառողական խանութ և այլն: Այդ մարմնին անդամակցում էին երիտասարդ իրավաբան Պարույր Լևոնյանը (Աշուղ Ջիվանու որդին) և քրդագետ Լազոն: Սակայն, ծրագիրը ձախողվեց, քանի որ կառավարությունը միջոցներ, փող չուներ[18]:

Քրդերի նկատմամբ նահանգապետ Ղորղանյանի բարյացակամ քաղաքականությունը դրսևորվում էր բազմաթիվ առիթներով. նա ազդեցիկ քրդերի պաշտոնների էր նշանակում, մի քանիսին շնորհում զենք կրելու իրավունք և այլն: Նա ծրագրել էր նահանգի քուրդ երևելիների գլուխն անցած, հատուկ գնացքով նրանց տանել Երևան, ներկայացնել կառավարությանը և վերջինիս կողմից նրանց պատիվների արժանացնել: Այս ծրագիրը տապալվեց 1920 թ. մայիսյան բոլշևիկյան խռովությունների պատճառով[19]:

Նահանգապետ Ղորղանյանը նույնիսկ փորձեր է արել կապեր հաստատելու սահմանից այն կողմ գտնվող քրդական աշիրաթապետերի հետ, այդպիսի հանձնարարություններով մարդիկ ուղարկել Ալաշկերտ, Վան և Կաքին, ու այդ մասին իմաց տվել ներքին գործերի նախարարին: Դրանով, Ղորղանյանն աշխատում էր բարենպաստ պայմաններ ստեղծել արևմտահայ տարագիրների հայրենի եզերք վերադարձի համար: «Բայց պետք չկա ասելու,- դառնությամբ գրում է նա,- որ այդ բարդ և մեծ գործը պահանջում էր մեծ միջոցներ և բազմաթիվ ինտելիգենտ ուժեր, որ չուներ մեր կառավարությունը»[20]:

Ղորղանյանն աշխատեց հանրապետության շահերին ծառայեցնել նաև այսպես կոչված «հաչող քրդերի» աղանդին[21], որը վերահայտնվել էր Կարսի նահանգի Կաղզվանի գավառում: Ղորղանյանը, գավառապետ Պալյանի միջոցով կապ հաստատեց աղանդի ղեկավար շեյխ Հյուսնիի հետ՝ քրդության մեջ «լոյալ, հանգիստ և մեզ բարեկամ մթնոլորտ ստեղծելու» նպատակով[22]: Այս մասին նահանգապետը ծածկագրված գաղտնի զեկուցում է ուղարկում Երևան, բայց կառավարությունից ոչ միայն այս ծրագրի համար փող, միջոցներ և հրահանգներ, այլ նույնիսկ պատասխան չի ստանում և ծրագիրը տապալվում է[23]:

Մի քիչ մանրամասն ներկայացնենք նահանգում հայ-քրդական հարաբերությունները էականորեն բարելավելու և ՀՀ-ի նկատմամբ քրդերի հավատարմությունը ամրապնդելու միտված, Ստ. Ղորղանյանի երեք այլ նախաձեռնությունները:

1. Պաշտոնական մեծ շքախմբի ուղեկցությամբ վարչապետ Ալ. Խատիսյանի այցելությունը Կարսի նահանգ՝ 1919 թ. նոյեմբերի 2-ից 6-ը: Նահանգապետի և իր շքախմբի հետ, վարչապետը այցելեց նաև քրդաբնակ շրջաններ, եղավ Սարիղամիշում, Կաղզվանում, Մերդենեկում և Արդահանում: Ժողովուրդը, մասնավորաբար քուրդ ազգաբնակչությունը, բացառիկ պատիվներով ընդունեց նրանց: Նահանգապետի առաջարկությամբ, վարչապետը հայկական բանակի սպայական ուսադիրներ և զինվորական կոչումներ շնորհեց մի քանի քուրդ երևելիների, ինչը մեծ գոհունակությամբ ընդունվեց քրդերի կողմից: Այդ երևելիների շարքին էր Կաղզվանի շրջանում բնակվող կասկանցի (զիլանցի) աշիրեթի պետ Հասան բեգը, որը շքախմբին դիմավորել էր 200 ձիավորներով և արժանացել հայկական սպայության երկրորդ աստիճանին[24]: Վարչապետը «հանձնարարեց նահանգապետին մի գումար նվիրաբերել երաշտից վնասված մի երկու քուրդ գյուղերի»[25]:

2. Նախիջևանցի թաթար Իբրահիմ Կաղիմովի նշանակումը Արդահանի գավառապետի պաշտոնին: Կաղիմովը, շատ չանցած, ամուսնացավ մի քրդուհու հետ, իրեն շրջապատեց քուրդ հեծյալ թիկնապահներով և զանազան այլ ձևերով սիրաշահեց գավառի քրդությանը: Կաղիմովը կարևոր դեր ունեցավ գավառում մեծ ազդեցության տեր, վրացական շահերի պաշտպան, աջարացի Ջեմալ բեգ Խամշիևի ազդեցության չեզոքացման գործում[26]: Կաղիմովի միջոցով գավառի քրդության հավատարմությունը ՀՀ-ին դրսևորվեց նաև կառավարության նախաձեռնած, Հայաստանի անկախության փոխառությանը ակտիվ մասնակցության մեջ: Կաղիմովի միջոցով, Ղորղանյան կապ հաստատեց ազդեցիկ քուրդ հրոսակապետ, քեմալականների Էրզրումի համագումարի պատգամավոր Ջաֆար բեգի հետ[27]: Կաղիմովից Ղորղանյանն ստանում էր քրդերի միջոցով ձեռք բերված հետախուզական տվյալներ սահմանի մյուս կողմում

թուրքական զորքերի տեղաշարժերի ու ծարգրերի մասին և այդ տեղեկություններն անհապաղ փոխանցում Երևան:

Սակայն, Կարսի բարձր հրամանատարությունը հենց սկզբից թշնամաբար տրամադրվեց նահանգապետի հովանավորությունը վայելող Կադիմովի նկատմամբ: Դա հատկապես դրսևորվեց 1920. մայիսի վերջին, երբ Ղորղանյանն առաջին անգամ մեկնել էր Երևան. Կադիմովին զրպարտության հիման վրա բանտարկելու փորձ արեցին գեներալները՝ կամավորականների խմբապետ, քրդերին հարստահարող Մուրադի միջոցով: Ղորղանյանին հազիվ հաջողվեց կառավարության միջոցով տապալել զինվորականների այս դավադրությունը: Նույն օրերին, նույն զինվորականների դրդումով և առանց նահանգապետի կարծիքը հարցնելու, Կարսի նահանգի Աբդահանի գավառից անջատվեցին Զարուշատի և Աղբաբայի մուսուլմանաբնակ շրջանները ու միացվեցին Ալեքսանդրապոլի նահանգին: Դա ամրագրվեց ՀՀ կառավարության 1920թ. մայիսի 25-ի նիստում ընդունված, ՀՀ վարչական բաժանման օրենքում[29]:

3. Զինվորական ցուցադրական զբոսանք-երթի կազմակերպման նախաձեռնությունը, որը նպատակ ուներ ահ ազդել նահանգի մուսուլման անհանգիստ տարրերի վրա՝ նրանց զգուշացնելով ՀՀ-ի նկատմամբ թշնամական քայլերի հետևանքներից: 1919 թ. օգոստոսի 30-ին նախատեսված այս ցուցադրությունը բարձր զինվորականության, մասնավորաբար գեներալ Հովսեփյանի ձգձգումների հետևանքով, և Ղորղանյանի՝ այս մասին կառավարությանը 17 դիմում-հեռագիրներից հետո[29], տեղի ունեցավ 1920 թ. հունվարին՝ ուղեկցված ավելորդ ու չհիմնավորված խստություններով, տալով նախատեսվածից հակառակ արդյունքը:

Քրդերի նկատմամբ հավեհարդար տեսնելու և նրանց ունեցվածքը թալանելով յուրացնելու իրենց մոլուցքի մեջ, գեներալներն ու գնդապետները շահագործեցին նաև քրդերի նկատմամբ թշնամությամբ ու վրիժառությամբ լցված հույներին և հայկական կամավորական խմբերին: Հույներից կազմվեցին առանձին զորամիավորներ: 1920 թ. հունիսին, «հենց մեր զորաբանակը անցավ դեպի Օլթի, այդ հույները հարձակվեցին Օլթիի գավառի խաղաղ քուրդ գյուղերի վրա»[30]: Հայ կամավորների կողքին, հույները հիմնականում զբաղված էին քրդերին իրենց բնակավայրերից քշելով և նրանց տավարի ու ոչխարի հոտերը, գորգերն ու այլ ունեցվածքը հօգուտ իրենց և բարձր հրամանատարության թալանելով[31]: Այս անիրավությունների մասին նահանգապետ Ղորղանյանի Երևան անընդհատ տեղացող հաղորդագրություններն ու բողոքագրերը մնում էին անհետևանք, քանի որ բարձր սպայությունը վայելում էր 1920 թ. մայիսից իշխանության փաստական մենատեր, զոբաց և ներքին գործերի նախարար Ռուբեն Տեր-Սինասյանի հովանավորությունը:

Արդյունքը, ինչպես նշեցինք, եղավ քրդերի թշնամացումը ՀՀ-ի նկատմամբ: Իրենց բնակավայրերից քշված փախստական քրդերը ապաստան գտան սահմանի մյուս կողմում, ուր իրենց քարոզչությամբ է՛լ ավելի գրգռեցին իրենց ազգակիցներին հայերի դեմ: Վերջիններիս հետ նրանք մասնակցեցին Քյազիմ Կարաբեքիրի՝ 1920 թ. աշնանային արշավանքին, որն ավարտվեց Կարսի խայտառակ անկումով, Հայրենիքի տարածքների կորստով և անկախ պետականության վերացումով:

1920թ. հունիսին Օլթիի ուղղությամբ հայկական զորքերի հառաջխաղացքի բուն նպատակն էր ճանապարհ հարթել դեպի Մև ծով ելքի համար[32]: Օլթի մուտքի ժամանակ տեղի քուրդ բնակչության նկատմամբ ապօրինի գործողությունները է՛լ ավելի հրահրեցին ՀՀ-ի նկատմամբ քրդերի թշնամական զգացումները: Զինվորականները չխորշեցին նման գործողություններ թույլ տալ նույնիսկ Ղորղանյանի կողմից Օլթիի գավառապետ նշանակված քուրդ Էզո բեգի նկատմամբ. նրանց ծառայող կամավորականները սպանեցին գավառապետի երկու հովիվներին և թալանեցին նրա 800 գլուխ ոչխարը: Օլթիի բնակչության կեսից ավելին փախչեց սահմանի թուրքական կողմը: Ըստ Ստ. Ղորղանյանի՝ Օլթիի քրդաբնակ շրջանում թալանվել է 32 հազար գլուխ տավար և ոչխար, որոնք իրացվում էին Վրաստանում, իսկ գորգերը, ցորենն ու այլ իրերը, որպես ավար, տեղափոխվում էին Կարս և Ալեքսանդրապոլ և այնտեղ հալվում[33]:

Մեպտեմբերի 18-ին, Կարսի նահանգի մուսուլմանների նկատմամբ ապօրինի գործողություններին վերջ տալու պատրվակի տակ, Քյազիմ Կարաբեքիրի զորքերն ու քրդական հրոսակախմբերը սկսեցին պատերազմը ՀՀ-ի դեմ: Հայկական զորքը, միայն թույլ դիմադրություն ցույց տալով, իրար հետևից դատարկեց Օլթին, Կաղզվանն ու Մարիղամիշը և նահանջեց Կարսի ուղղությամբ: Ամրացված բերդաքաղաքը, ազգային ոգու բացակայության և հաղթանակի կամքի չգոյության պատճառով[34], առանց լուրջ դիմադրության, խայտառակ կերպով ինկավ թուրք-քուրդ միացյալ ուժերի ձեռքը հոկտեմբերի 30-ի կեսօրին: Կարսի վրա հարձակվող թուրքական զորքերի հառաջապահի դերը կատարում էին քուրդ ձիավորները[35], որոնց թիվը, ըստ գերի ընկած մի թուրք սպայի, 1000 հոգի էր[36]: Այդ ձիավորների առաջին շարքում էին նահանգից փախստական քրդերը: Ըստ Կարսի անկման ականատես Արտաշես Բաբալյանի՝ հոկտեմբերի 30-ին, «մինչև ուշ երեկո տաճկական մի զումարտակ միայն, քուրդ ձիավորներով, գրաված պահեց քաղաքը»[37]: Հոկտեմբերի կեսերին, հայկական բանակի ռազմական մի զեկույցում հայտնվում էր, որ «թուրքական բանակին կընկերանա քուրդ ձիավոր զորամաս մը Մալազկերտի Քեռռ Հյուսեյն փաշայի և իր մարդոց ղեկավարությամբ»[38], իսկ

Իգդիրի և Երևանի ուղղությամբ գործում էին Մասիսի և Կողբի քուրդ ձիավորները[39]:

Դեպի Հայաստանի խորքերը հառաջացող թուրքական զորքերի կողքին կռվող քրդերը առանձնահատուկ դաժանությամբ վարվեցին Կարս քաղաքի և նահանգի հայ ազգաբնակչության հետ, անխնա բռնաբարելով, կողոպտելով ու սպանելով, վրեժ լուծելով իրենց ազգակիցների նկատմամբ կատարված դաժանությունների համար[40]:

Նոյեմբերի երկրորդ կեսին, ՀՀ-ը վերջնականապես պարտվեց հայ-թուրքական պատերազմում, և որպես անկախ հանրապետություն, դադարեց գոյություն ունենալուց:

Կարսի նահանգը Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի իրարահաջորդ համաձայնագրերով անցավ Թուրքիային, մի իրավիճակ, որը հակառակ Երկրորդ աշխարհամարտից հետո դրանք հետ բերելու Խորհրդային Միության կատարած փորձերի, շարունակվում է առ այսօր:

Ամփոփելով՝ լիովին համաձայն ենք Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի հետևյալ գնահատականի հետ. «Մենք ունեինք բոլոր տվյալները Կարսի նահանգը մեծ պատնեշ դարձնելու թուրքական հարձակումների դեմ: Կարսի նահանգը ավելի քան կեսով բնակեցրած էր քրդերով[41], որ այնպես տրամադիր էին մերձենալու մեզ: Իսկ մենք, փոխանակ կոփելու այդ տրամադրությունը,...փոխանակ սպառնալից բռունցք ստեղծելու մեր սահմաններում, մենք հետ մղեցինք դեպի մեր հովանին նետվող այդ քրդերին:

Եվ մենք առատորեն հնձեցինք մեր ցանածը»[42]...

YAZCHYAN GEVORG

THE ARMENIAN-KURDISH RELATIONS IN THE KARS PROVINCE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1919-1920

(Summary)

After the defeat of the Ottoman Empire in the World War I, the Kars oblast of the Russian Empire was occupied by British forces. Great Britain passed to the jurisdiction and sovereignity of RA in April 1919.

The population of the province consisted of many nationalities, the majors of which were the Armenians, the Kurds and the Turks.

The policy of the authorities of RA towards the Turkish and Kurdish population of the province varied diametrically between the military and the civil authorities, and specially the covernor Stepan Ghorghanyan followed a tolerant policy, the military inclined to the force, sometimes permitting violence towards the Kurds. The majority of the Kurds, who expected tolerance from the Armenian authorities were looted and forced to deport.

This led them to join the Kemalists during the Turko-Armenian War of 1920, which lasted with the fall of Kars and the collapse of the Armenian independent state. Thees, the leadership of RA, with his false policy towards the Kurds, anverted them from potential sattelities to actual enemies, a factor that antributed led by Karabekir Pasha.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուս վերաբնակիչների թիվը 1916. սկզբին անցնում էր 9 հազարից. տե՛ս - Վահե Արծրունի, Հայ-թուրքական պատերազմը - Հայ սպայությունը - Շատախ, Երևան, 2002, էջ 408-409, ծանոթագրություն 24 (ծանոթագրող՝ Գեղամ Բաղալյան):
2. Օրինակ, թուրքմեններով բնակված գյուղեր էին Թիխնիսը, Սուփանազատը և Գոթանլուն (Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 419, ծանոթագրություն թիվ 102; էջ 420, ծանոթագրություն թիվ 106):
3. Armenia - Political and Ethnic Boundaries (այսուհետև՝ APEB), compiled and edited by Anita Burdett, London, 1998, p. 351.
4. APEB, p. 487. Մոտավորապես նույն թվերն է նշում նաև Ալեքսանդր Խատիսյանը, հայտնելով թե թուրքերն ու թաթարները կազմում էին 102,860, քրդերը՝ 54,931 հոգի. տե՛ս Ալեքսանդր Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, ապրիլ 1925թ., էջ 49:
5. APEB, p. 447. Ալ. Խատիսյան Կարսի հայ գաղթականների թիվ է նշում «մոտ 100.000 հոգի». տե՛ս Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 49:
6. Այս հարցը առերևոյթ կարգավորվեց 1919թ. գարնանը Ալ. Խատիսյանի Թիֆլիս կատարած այցելության ժամանակ: Վրաստանին թողնվեցին Կուր գետի ձախափնյա տարածքները. տե՛ս Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 49: Այսուհանդերձ, վրացիք չդադարեցին հավակնել մարզի տարածքներին, նույնիսկ անդրքուլիսային բանակցություններ վարելով քեմալականների հետ:
7. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բ. հրատարակություն, Երևան, 1993, էջ 257:
8. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 261:
9. APEB, pp. 455, 470-471.
10. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 89-90; բժիշկ Հովակիմ Սելիքյան, Արյան ճանապարհով, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, ապրիլ 1925, էջ 133 և այլն:
11. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 211-212:
12. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 70-71, 94, 96:
13. Սեպուհի հրամանատարած 4-րդ բրիգադայում զրագիր ծառայած անանուն հեղինակ, Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը, Երևան, 1994, էջ 3; Գարեգին եպս. Հավսեփյանց, Կյանքիս ամենադժբախտ օրը և երջանկությանս ոռպեն, Դ. հրատարակություն, Երևան, 2002, էջ 35; Գարեգին եպս. Հովսեփյանց, Կարսի անկումը 1920թ. - Օրագրություն, Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, թիվ 3, էջ 131; Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 29, 30, 31, 59, 67, 73, 94, 124, 153, 156, 384; Արտաշես Բաբալյան, Կարսի անկումը, «Հայրենիք», հոկտ. 1923, էջ 62; Կարո Սասունի, Հայ-թուրքական

պատերազմը, «Հայրենիք», 1926, թիվ 6, էջ 87-88; նաև Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ՊԿՊԱ), ֆոնդ 477, ցուցակ 1 (Ստեփան Ղորղանյանի հուշագրությունը):

14. Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», ապրիլ 1925, էջ 50:
15. Ստ. Ղորղանյանը իր դեռևս անտիպ հուշերում (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1) շատ տեղերում գրում է քրդերին իր համակրության մասին, երբեմն հասնելով մինչև իսկ քնարական զեղումների նրանց հասցեին:
16. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 1-ին մաս, թ. 75:
17. Նույնը, թ. 74:
18. Նույնը, թ. 80:
19. Նույնը, թ. 81-82:
20. Նույնը, թ. 88-89:
21. Աղանդն ստեղծվել էր Արևմտյան Հայաստանում, 1890-ական թվականներին: Նա խաղաղություն էր քարոզում և մերժում չարությունը: Այդպես էր կոչվել անդամների աղոթքի ժամանակ երկինք նայելով հաչոցի նման ձայներ արձակելու համար: Ցարական իշխանությունների կողմից խստորեն ճնշվելուց հետո, 1915-1916թթ.-ին, պատերազմական գործողությունների հետևանքով, այս աղանդը վերստին հայտնվել էր ասպարեզում:
22. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 1-ին մաս, թ. 104:
23. Նույնը, թ. 105-106:
24. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 2-րդ մաս, թ. 198-199: Հաշվի առնելով հասան ռեգին ընծայված այս պատիվը, 5-րդ գնդի հրամանատար գնդապետ Շաղուբաթյան (այլ աղբյուրներում գնդապետի ազգանունը նշվում է Շահբուդաղյան ձևով) 1920թ. աշնանը Կաղզվանը պարպելու ժամանակ նրան է հանձնարարում գավառում մնալ ցանկացող հայոց կյանքի և ինչքի ապահովությունը. տե՛ս Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 96-97:
25. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 2-րդ մաս, թ. 207:
26. Օգտվելով 1920թ. օգոստոս-նոյեմբերի հայ-թուրքական պատերազմից, վրացիք վերստին բացահայտեցին իրենց նկրտումները Արդահանի, Օլթիի և Չղդրի շրջանների, ինչպես նաև Լոռի-Փամբակի նկատմամբ:
27. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 1-ին մաս, թ. 115:
28. Օրենքի շարադրանքը տե՛ս «Գոլոս Արմենիի» ռուսերեն օրաթերթ, Երևան, 2002թ., մայիսի 28, էջ 1:
29. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 1-ին մաս, թ. 232:
30. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 2-րդ մաս, թ. 263-264:
31. Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 67:
32. Համաձայն չենք պատմական գիտությունների թեկնածու Կտրիճ Սարդարյանի այն գնահատականի հետ, որ հայկական զորքերի առաջխաղացքը և Օլթիի գրավումը քայլեր էին, «որոնք ավելի շատ համընկնում էին թշնամու ծրագրերին». տե՛ս Կտրիճ Սարդարյան, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ, Երևան, 2002, էջ 138: Նման գնահատականը ճիշտ ենք գտնում այլազգի ազգարնակչության նկատմամբ զորքերի ապօրինի գործողությունների համար միայն: Ինչպես ճիշտ է նկատել տալիս Արտաշես Բաբալյանը, «մեր զորքի կողմից գործված բռնությունները իսլամ ազգարնա-

կության վրա պատրվակ էին տաճիկ փաշաների համար, և երբեք պատճառ չէին պատերազմի». տե՛ս Արտաշես Բաբալյան, Կարսի անկումը, «Հայրենիք», հոկտ. 1923, էջ 64:

33. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, 2-րդ մաս, թ. 264-268:
34. Տե՛ս Գեորգ Ցազրճյան, Ոգուն չապավինելու արդյունքը, Երևան, 2002, էջ 10, 12:
35. Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 271:
36. Նույնը, էջ 290-291:
37. Արտաշես Բաբալյան, Կարսի անկումը, «Հայրենիք», հոկտ. 1923, էջ 62:
38. Կարո Սասունի, Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք», 1926, թիվ 6, էջ 83:
39. Նույնը, էջ 95:
40. Գարեգին արք. Հովսեփյանց, Կարսի անկումը 1920թ. - Օրագրություն, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թիվ 3, էջ 129-131, 157:
41. Ստ. Ղորղանյան խիստ չափազանցում է քրդերի քանակը Կարսի նահանգում: Նրանք կազմում էին բնակչության 14 տոկոսից էլ պակաս:
42. ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 477, ց. 1, գ. 7, 1-ին մաս, թ. 85-86: